ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1

ք.Երևան «27» դեկտեմբերի 2017թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն, աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԲԵՍԹ ՍՈՖԹ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրոնային ծրագրային համակարգերի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ծեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 18500000 (տասնութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագրի հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2018թ. դեկտեմբերի 20-ը.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագիր կնքելու պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
h/h 900013220026	Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Աշխատակազմի ղեկավար	
----------	Տնօրեն՝ Հ.Մարգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀՇՁԲ-18/7 -1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72261160/303	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» /ARPIS/, ԴԱՀԿ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ www.e-cadastre.am ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	դրամ	18500000	1	Արշակունյաց 7	15.12.2018թ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Տեխնիկական բնութագիր
Էլեկտրոնային ծրագրային համակարգերի սպասարկման ծառայությունների

Հավելված 1
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» /ARPIS/, ԴԱՀԿ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ www.e-cadastre.am ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգը ապահովում է էլեկտրոնային համակարգում /այսուհետ՝ ARPIS էլեկտրոնային համակարգ/ առկա անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի տեղեկությունների հիման վրա անշարժ գույքի որակական, քանակական բնութագրերի, գույքային իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ հաշվետվական ձևերի միջոցով տեղեկատվա-վերլուծական տվյալների ստացման, ինչպես նաև ARPIS էլեկտրոնային համակարգի միջոցով իրականացվող գործառույթների /գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում/ ընթացքի և դրանց իրականացմանը վերաբերվող ամփոփ տեղեկությունների ստացումը, ինչպես նաև ապահովում է էլեկտրոնային համակարգում առկա անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկի տեղեկությունների հիման վրա անշարժ գույքի որակական, քանակական և իրավական տվյալների ճշտման, խմբագրման աշխատանքների հնարավորությունը:

ARPIS էլեկտրոնային համակարգը հիմնված է մոդուլային ճարտարապետության սկզբունքի վրա (Service Oriented Architecture), բաղկացած է չորս ենթահամակարգերից՝ փաստաթղթաշրջանառության ենթահամակարգ, որը ներառում է նաև կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվը և օգտվողների կառավարման բաղադրիչը, գործառույթների կառավարման ենթահամակարգ, կադաստր տեքստային, որը ներառում է նաև ԴԱՀԿ ծառայության էլեկտրոնային համակարգից տեղեկությունների ստացման էլեկտրոնային ծառայություն և քարտեզների ստեղծման և պահպանման ենթահամակարգեր: Ենթահամակարգերից յուրաքանչյուրը կարող է կիրառվել որպես ինքնուրույն էլեկտրոնային համակարգ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող ԴԱՀԿ էլեկտրոնային համակարգը /այսուհետ՝ ԴԱՀԿ էլեկտրոնային համակարգ/ ապահովում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից գույքային միավորների կամ սուբյեկտների վրա կիրառվող արգելանքների վարման ենթահամակարգ:

Կադաստրի պետական կոմիտեի www.e-cadastre.am կայքը նախատեսված է անշարժ գույքի կադաստրի կողմից հանրությանը էլեկտրոնային ծառայությունների մատուցումը ապահովելու համար: Կայքում ներդրված են մի շարք

էլեկտրոնային ծառայություններ, որոնք ցանցային ծառայությունների (web-service) միջոցով փոխկապակցված են «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի հետ:

Պատվիրատուն սպասարկում իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source code/ և տեխնիկական փաստաթղթերը:

Սպասարկման ժամկետի վերջում Սպասարկողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները, համակարգերի տեխնիկական փաստաթղթերը՝ իրենց գաղտնաբառերով:

2. ARPIS ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ARPIS Էլեկտրոնային համակարգը սպասարկում իրականացնողը պետք է ապահովի առնվազն հետևյալ աշխատանքների կատարումը՝

1. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում.

Թերությունները և բացթողումները տարանջատվում են երկու տեսակի՝ անհետաձգելի շտկում պահանջող թերություններ և համակարգի աշխատանքի տրամաբանական սխալների շտկման հետ կապված թերություններ:

Անհետաձգելի շտկում պահանջող թերություններ են համարվում համակարգի աշխատանքի այն խոչընդոտները, որոնց առկայությունը խաթարում է համակարգի միջոցով կատարվող ընթացիկ գործառույթների իրականացումը: Անհետաձգելի շտկում պահանջող թերությունները պետք է շտկվեն 24 ժամվա ընթացքում

2. Համակարգի տվյալների շտեմարանների և ծրագրային ֆայլերի պահուստային պատճենների ստեղծում (օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից:
3. Պատվիրատուի կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգի տվյալների բազայից հաշվետվությունների ստացում
4. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում
5. Պատվիրատուի պահանջով և պատվիրատուի տրամադրված պայմաններով համակարգում մուտքագրված դիմումների տարբեր փուլերի ավտոմատացման կամ որոշակի սահմանափակումների ներդրման իրականացում
6. Պատվիարտուի պահանջով համակարգում տարբեր գործողությունների իրականցման համար առանձին իրավունքների ավելացում և լրացում
7. Պատվիրատուի պահանջով համակարգում մուտքագրված դիմումների համար կազմվող ավարտական փաստաթղթերի ձևաթղթերի փոփոխությունների կատարում
8. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում տարբեր մարմիններին տրամադրվող (այդ թվում՝ պաշտոնական կայքում առկա) էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում, կրկնօրինակում այլ մարմինների համար և լրացում
9. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների ծրագրային փոփոխությունների և լրացումներ
10. Պատվիրատուի պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում
11. Պատվիրատուի պահանջով համակարգում առաջացած խոտանված տվյալների մշակում
12. Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում և թերությունների վերացում
13. Անհետաձգելի շտկում պահանջող թերությունների ի հայտ գալու դեպքում Էլեկտրոնային համակարգի սպասարկումը պետք է իրականացվի նաև ոչ աշխատանքային օրերին՝ համակարգում կիրառվող ցանցային եղանակով սպասարկվող այլ ծառայությունների հետ աշխատանքը չընդհատելու նպատակով
14. Համակարգում ծրագրային փոփոխություններ իրականացնելու դեպքում այն նախ պետք է տեղադրել ՀՀ ԿԱ կադաստրի պետական կոմիտեի տեստային միջավայրում, որտեղ տեստավորումից հետո, պատվիրատուի համաձայնության դեպքում տեղադրել այն հիմնական միջավայրում
15. ARPIS Էլեկտրոնային համակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքն ապահովելու համար կատարել անհրաժեշտ ծրագրային փոփոխություններ և շտկումներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարել քարտեզների ներբեռնում համակարգ և արտահանում համակարգից
16. ARPIS Էլեկտրոնային համակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով տվյալների շտեմարանից արտահանել և տրամադրել տեղեկատվություն ըստ պատվիրատուի կողմից ներկայացված ձևաչափի
17. ARPIS Էլեկտրոնային համակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով կատարել քարտեզների թարմացում տեստային և հիմնական համակարգերի միջև
18. ARPIS Էլեկտրոնայինհամակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով ստեղծել քարտեզի նոր շերտեր մուտքագրելու և դիտելու հնարավորություն, կատարել տվյալների բազաների համապատասխան կարգաբերումներ

19. ARPIS էլեկտրոնայինհամակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով ստեղծել քարտեզի տարբեր շերտերում որոնում կատարելու և օբյեկտների մասին տեղեկատվություն ստանալու հնարավորություն

20. ARPIS էլեկտրոնայինհամակարգի քարտեզագրական մոդուլի աշխատանքներն իրականացնելու նպատակով և պատվիրատուի պահանջով տվյալների բազայի տեքստային և քարտեզագրման համակարգում եղած տվյալների համեմատական վերլուծությունների կատարում և արդյունքների տրամադրում

3. ԴԱՀԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՀԿ էլեկտրոնային ենթահամակարգի սպասարկում իրականացնողը պետք է ապահովի հետևյալ աշխատանքների կատարումը՝

1. Ապահովել ԴԱՀԿ համակարգի և ARPIS էլեկտրոնային համակարգի միջև տվյալների փոխանակման համար ստեղծված էլեկտրոնային ծառայության անխափան աշխատանքը
2. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում
3. Պատվիրատուի պահանջով կատարել ԴԱՀԿ ուղարկվող պատասխան գրությունների ձևաթղթերի և տվյալների փոփոխություններ
4. Ապահովել համակարգի անվտանգությունը՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը,
5. Օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում,
6. Պատվիրատուի պահանջով և ներկայացված ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների ստացում
7. Պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների ներբեռնում համակարգ
8. Պատվիրատուի պահանջով համակարգերում անհրաժեշտ փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում
9. Անհրաեշտության դեպքում համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում
10. Համակարգում գործառույթների իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ խոչընդոտների կարգաբերում

4. www.e-cadastre.am ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

www. e-cadastre.am կայքի տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցողը պետք է կատարի կայքի տեխնիկական սպասարկման հետևյալ աշխատանքները

1. Կայքի անվտանգության ապահովում չարտոնագրված մուտքերից շուրջօրյա ռեժիմով (24/7)
2. Օրական, շաբաթական և ամսական պահուստային կրկնօրինակների ստեղծում
3. Կայքի վերականգնում պահուստային կրկնօրինակներից՝ ըստ պատվիրատուի պահանջի
4. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, նաև բաժինների ծրագրային թարմացում
5. Կայքի այցելությունների և որոնողական համակարգերում կայքի տեսանելիության վերաբերյալ մոնիտորինգ պարբերաբար մոնիտորինգի իրականացում, պատվիրատուի պահանջով մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում
6. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում
7. Հոսթինգի կառավարում, դրա կարգավորումների դիտարկում և փոփոխությունների իրականացում՝ ըստ տեխնիկական անհրաժեշտության կամ պատվիրատուի պահանջի
8. Որոնման համակարգերի համար Կայքի օպտիմալացում և համապատասխան կարգաբերումներ
9. Կայքի հետ աշխատող պատվիրատուի անձնակազմի տեխնիկական աջակցություն
10. Կայքի առանձին գրաֆիկական մասերի փոփոխությունների (որոնք չեն հանգեցնում Կայքի ընդհանուր արտաքին տեսքի փոփխություն), ըստ պատվիրատուի պահանջի
11. Կայքի տվյալների շտեմարաններից պատվիրատուի պահանջով հաշվետվությունների արտահանում
12. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների կամ սխալների վերացում
13. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների ծրագրային ապահովման անխափան աշխատանքի ապահովում:

1. Ծառայությունը պետք է մատուցվի աշխատանքային օրերին, իսկ այն մասով, որը ապահովում է կոմիտեի ինտերնետային կայքերի անխափան աշխատանքի ապահովմանը, նաև ոչ աշխատանքային օրերին՝ կայքերի անխափան աշխատանքի համար ծրագրային խոչընդոտների առկայության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում,

երբ դա անհրաժեշտ է աշխատանքային օրերի ընթացքում համակարգերի անխափան աշխատանքները ապահովելու համար:

2. Կատարողը պետք է ունենա անշարժ գույքի և բարտեզագրման կառավարման համակարգերի սպասարկման, ինչպես նաև քարտեզագրական նյութերի հետ աշխատանքի, մշակման և ներբեռնման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,

3. Սպասարկման ժամկետի վերջում Սպասարկողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերվող բոլոր տվյալները և ծրագրային փոփոխությունների կոդերը ելակետային նյութերը /source code/

4. Սպասարկման ընթացքում կատարողը պատվիրատուի պահանջով պետք է կատարի ծրագրային փոփոխություններ, որոնք չեն գերազանցի տվյալ ֆունկցիոնալ մոդուլի ծրագրային ծավալի 30%-ը: Կատարված ծրագրային փոփոխությունների համար Պատվիրատուն նախորդ եռամսյակում կատարված ծրագրային փոփոխությունների համար կազմում է հաշվետվություն, որը երկկողմ ստորագրվում է և հետագայում հանդիսանում է վերը նշված տեխնիկական բնութագրի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ _____ Հ.Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
27.12.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1 էլեկտրոնային ծրագրային համակարգերի սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան «26» հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/,ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և <<ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 27.12.2017թ. կնքված էլեկտրոնային ծրագրային համակարգերի սպասարկման ծառայությունների գնման թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ էլեկտրոնային ծրագրային համակարգերի սպասարկման ծառայությունների վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (Պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2018թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
ք.Երևան, Արշակունյաց7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
ՀՀ ֆինանսների նախարարության	Ամերիաբանկ ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	h/h 1570004845660100
Հ/Հ 900013220026	ՀՎՀՀ 01568139
ՀՎՀՀ 02534328	
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Վ.Հասրաթյան	Տնօրեն՝ _____ Հ.Մարգարյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«27» 12 2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/7-1
ծառայության գնման պայմանագրի
«26» հունվարի 2018թ. կնքված թիվ 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գն. պլ. նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/ 303	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» /ARPIS/, ԴԱՀԿ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ www.e-cadastre.am ԿԱՅՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1700.0	3400.0	5100.0	6800.0	8500.0	10200.0	11900.0	13600.0	15300.0	17000.0	18500.0	18500.0

Պատվիրատու
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
ք.Երևան, Արշակունյաց7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 90001320026
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Վ.Հասրաթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570004845660100
ՀՎՀՀ 01568139
Տնօրեն՝ _____ Հ.Մարգարյան
Կ.Տ.